



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 18-Լ

18 հունվարի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի հաստիքացուցակը և կառուցվածքը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստիքացուցակով սահմանված վարչական ստորաբաժանումների աշխատակիցների աշխատավարձերը հաստատել 2021 թվականի համամասնություններով, իսկ լրավճարները՝ ներկայացված տարբերակով՝ համաձայն Հավելված 1-ի:
3. «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի կենտրոն», «Ռազմավարական պլանավորման կենտրոն» և «Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների աշխատավարձերը հաստատել ներկայացված տարբերակով՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Սույն որոշմամբ հաստատված հաստիքացուցակը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից՝ բացառությամբ «Անձնակազմի կառավարման բաժին», «Իրավաբանական ծառայություն», «Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն», «Դոկտորական կրթության կենտրոն», «Հանրային կապերի և մարքեթինգի վարչություն», «Շարունակական կրթության կենտրոն», «Ռազմավարական պլանավորման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումների, որոնց գործ-ունեությունն ուժի մեջ է մտնում՝ համաձայն Հավելված 2-ի ժամանակացույցի:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝
2022թ. հունվար «18»

Երևան

Ս. Պապիկյան